ծայրագոյն լեառն մասիս, և այժմոյս եղև 'ի ափն ովկիանոս կօրմանդէլ 'ի դրանն մայրաքաղաքի Մադրասու յԱմի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Նա ևս հարկաւոր է փոքր ինչ ևս յիշեցուցանել 'ի միտս ձեր վասն զվարթացուցանելոյ սիրտ և հաստատելոյ հաւատ և յորդորելոյ սէր ամենեցուն, զի արիանասցեն 'ի սասանմանէ, որում վաղնջոց ժամանակաւ իբրև ուսեալ ծառայութիւն, և ոչ հեռացուցանիմ վկայութիւնք բանին իմոյ ժամանակս իբր և դարս անցելոց՝ եթէ ոչ ցուցանիմ ձեզ անցք անցելոյ 'ի ժամանակի կենաց մերոց. նախ ասեմ վասն քաջ ազգին Վրաց որ իսկզբանէ մինչև ցիսնարհիլն թագաւորութիւնն Հայոց՝ վիրք երբեմն թագաւորութեամբ, երբեմն հպատակ իշխանութեամբ փոքրիկ յաշխարհն Վրաց, որ ոչ համեմատի, յաւելի քանթէ երկու 'ի հնգեսասան յաշխարհին Հայոց, պահեցին շուք ազատութեան 'ի մէջ յազգին իւրեանց, թէպէտ ժամանակ ընդ ժամանակ նեղեցան, 'ի անօրէն բռնաւորացէ և յատկապէս բառբառոսացէ կողոպտեցան, գերեցան մինչ զի երբեմն ման փոքրիկ յաշխարհին իւրեանց ամայի դասն, այլ երբէք ոչ սասանեցան և ոչ թուլացուցին զօրութիւն բանական հոգոյ իւրեանց, արիացան և եղին զանձինս իւրեանց իբրև զոհ վասն պահելոյ ազատութիւնս իւրեանց և պահեցին մինչև